

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
(2014-2015)

1. Կրթական գործընթաց
2. Դասախոսական համակարգի և ուսումնական բեռնվածություն
3. Գիտահետազոտական աշխատանքներ
4. Բարեփոխումներ և կրթության որակի ապահովում
5. Սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն

### Կրթական գործընթաց

Ֆակուլտետը հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի կրթության ծրագրեր է իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով.

"Մաթեմատիկա" - առկա և հեռակա համակարգեր

"Ինֆորմատիկա" - առկա և հեռակա համակարգեր

"Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" - առկա և հեռակա համակարգեր

"Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" - առկա

"Ֆիզիկա" - առկա և հեռակա համակարգեր:

Մագիստրատուրայի կրթական ծրագրեր իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով.

"Ինֆորմատիկա" - առկա համակարգ

Կրթական գործընթացը կազմակերպվում է կրեդիտային հենքով կազմված և 2012-2013, 2013-2014, 2014-2015 թվականներին ներառված ուսումնական պլաններով:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ուսանել են մոտ 400 ուսանողներ:

Ֆակուլտետի ուսումնամեթոդական աշխատանքներն սպասարկում են ֆիզիկայի 6, ինֆորմատիկայի 2, "Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" մասնագիտության 2

լաբորատորիաներ, ակադեմիկոս Մերգեյ Մերգեյանի անվան համակարգչային կենտրոնը, արհեստանոցները, էլեկտրոնային լսարանը և գիտահետազոտական կոմպլեքս լաբորատորիան:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա՝ հենվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնական վարչության և գիտական մասի որոշումների հիման վրա:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 98,3, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 98 տոկոս: Հեռակա համակարգում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 76,5 և 78 տոկոս:

Մագիստրատուրայի առաջադիմությունը կազմել է 98.5, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 97.6 տոկոս:

Ավարտական որակավորման քննությունների արդյունքները հետևյալն են.

Առկա ուսուցում (բակալավրիատ).

**"Ինֆորմատիկա"** մասնագիտություն

/h	Առարկան	Ուս. քանակը	2		3		4		5	
			քանակը	%	քանակը	%	քանակը		քանակը	%
.	Ինֆորմատիկա	5	0	0	2	20		0	2	40
.	Մանկ. և ԻԴՄ	5+1/է/	0	0	2+1/է/	50		7		33

Հեռակա ուսուցում (բակալավրիատ).

**"Ինֆորմատիկա"** մասնագիտություն

/h	Առարկան	Ուս. քանակը	2		3		4		5	
			Քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
	Ինֆորմատիկա	18+7 /ե/	2	8%	19	76%	4	16%		
	Մանկ. և ԻԴՄ	18+2	0	0	2	40%	4	21%		

**"Ֆիզիկա"** մասնագիտություն

/h	Առարկան	Ուս. քանակը	2		3		4		5	
			Քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
	Ֆիզիկա	8	0	0	4	50%	3	37%	1	13%
	Մանկ. և ՖԴՄ	8	0	0	3	37%	4	50%	1	13%

**"Մաթեմատիկա"** մասնագիտություն

/h	Առարկան	Ուս. քանակը	2		3		4		5	
			Քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
	Մաթեմատիկա	14	0	0	11	78%	1	7.5%	2	14.5%
	Մանկ. և ՄԴՄ	14	0	0	10	71%	2	15%	2	14%

**Մագիստրոսական կրթական ծրագիր**

**"Մաթեմատիկա"** մասնագիտություն

/h	Առարկան	Ուս. քանակը	2		3		4		5	
			Քանակը		քանակը	%	քանակը	%	քանակը	%
	Ավարտական աշխատանք	7							7	100%

2014-2015 ուսումնական տարում մագիստրատուրայի ծրագրով առկա համակարգում ուսուցումն ավարտեցին 17 ուսանողներ (7-ը՝ "Մաթեմատիկա", 10-ը՝ "Ինֆորմատիկա" մասնագիտություններով): Նրանցից 13-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (3-ը՝ "Մաթեմատիկա", 10-ը՝ "Ինֆորմատիկա" մասնագիտություններով):

Բակալավրիատի կրթական ծրագրով ուսուցումն ավարտել են 43 ուսանողներ (5 առկա և 38 հեռակա):

2014-2015 ուստարում ֆակուլտետի հայտարարված երեք "Մաթեմատիկա", "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա", "Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա" մասնագիտությունների գծով 1-ին կուրսեր են ընդունվել՝

բակալավրի կրթական ծրագիր.

առկա բաժին՝ 43 ուսանող, հեռակա բաժին՝ 21:

Ուսուցման որակի և ուսանողների գիտելիքների արդարամիտ գնահատման կարևոր ցուցանիշ են մադումները:

2014-2015 ուստարում ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով հեռացվել է առկա բաժնից մեկ ուսանող և հեռակա բաժնից 2 ուսանող: Ուսումնական պարապմունքներից բացակայության պատճառով հեռացվել են առկա բաժնից երկու ուսանող: Իր դիմումի համաձայն առկա բաժնից հեռացվել է 5 ուսանող, հեռակա բաժնից՝ 6 ուսանող: Հեռակա բաժնից տարեկետման է մեկնել 1 ուսանող: Առկա բաժնի ԱՏ համակարգից զինձառայության է մեկնել 7 ուսանող և հեռակա բաժնից 15 ուսանող:

Վերականգնվել են հեռակա բաժնում զինձառայությունից վերադարձած 15 ուսանող, առկա բաժնում՝ 14 ուսանող, երկու ուսանող ընդունվել է 2-րդ մասնագիտություն ստանալու համար:

Քննաշրջանների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի գիտաուսումնամեթոդական խորհրդում ու համապատասխան ամբիոններում, և առաջիկայում ևս կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ վիճակը էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Բավարար մակարդակով են կազմակերպվել արտադրական պրակտիկաները: Բակալավրիատի ուսանողների մանկավարժական պրակտիկայի համար ընտրվել են՝ "Մաթեմատիկա" բաժին՝ թիվ 15 դպրոցը, "Ինֆորմատիկա" բաժին՝ թիվ 1, դպրոցը, "Էվրիկա" հատուկ դպրոցը, ՎՊՀ հենակետային վարժարանը, իսկ "Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" բաժին՝ թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանը: Արտադրական պրակտիկայից առաջ անպայման կազմակերպում ենք խորհրդակցություններ համապատասխան կուրսերի ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների և հոգեբանների մասնակցությամբ:


Ինչպես և նախորդ տարիներին, մագիստրատուրայի բաժնի ուսանողների արտադրական պրակտիկան այս ուստարում ևս կազմակերպվեց բուհում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ֆակուլտետի մագիստրատուրայի մի շարք ուսանողներ 2-րդ կուրսում արդեն ի վիճակի են բակալավրիատում դասավանդելու:

2015թ. սեպտեմբերից շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով Էրազմուս Մունդուս ծրագրի նախագծի դրամաշնորհ ստացած ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի "Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա " մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող Նարեկ Ջաղինյանը մեկնել է ուսանելու Լատվիայի Ռիգայի տեխնիկական համալսարան, իսկ "Տեխնոլոգիա և ձեռնարկչություն" մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող Էդուարդ Հակոբյանը՝ Լեհաստանի Լոդզի համալսարան:


## Դասախոսական համակազմ և ուսումնական բեռնվածություն

Ֆակուլտետում գործում են 3 մասնագիտական ամբիոններ, որտեղ աշխատում են հիմնական հաստիքներով և ժամավճարային կարգով 41 դասախոսներ, այդ թվում գիտության դոկտոր, պրոֆեսոր՝ 3, 28 թեկնածուներ, որոնցից 23-ը՝ դոցենտներ և համահամալսարանական ամբիոնների դասախոսներ:

2015 թ. դոկտորական թեզ է պաշտպանել ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Ն.Մ. Սարգսյանը:



Պրոֆեսորադասախոսական համակազմի մինչև 30 տարեկան դասախոսների թիվը 2 է, 30-40՝ 3, 40-50՝ 7, 50-60՝ 11, 60-70՝ 11, 70-ից բարձր՝ 7 (դիագրամ):



Ֆակուլտետի փորձառու, բանիմաց, գիտամանկավարժական և հետազոտական լավ դպրոցներ անցած դոցենտների միջին տարիքը բարձր է, որը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս և նոր, երիտասարդ, խոստումնալից կադրերի նախապատրաստման հրատապ խնդիրներ առաջադրում:

### **Գիտահետազոտական աշխատանքներ**

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսների կողմից ընդհանուր առմամբ հրատարակվել են 18 աշխատանքներ:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքները նրանց կրթության կարևոր բաղադրիչներից են: Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության աշխատանքները համակարգվում են ֆակուլտետային ՈՒԳԸ խորհրդի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում, ֆակուլտետում ՈՒԳԸ կոնֆերանս է անցկացվել, որտեղ զեկուցված 16 աշխատանքներից լավագույնները երաշխավորվել են և զեկուցվել ինստիտուտի ՈՒԳԸ տարեկան կոնֆերանսում: Ֆակուլտետի 4 ուսանողներ ՈՒԳԸ շրջանակում մասնակցել են և զեկուցումներով հանդես եկել Գյումրիի պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցած ՈՒԳԸ միջբուհական կոնֆերանսում: Զեկուցված բոլոր աշխատանքները երաշխավորվել են հրատարակման:

Ամբիոնների առջև շարունակաբար խնդիր է դրված ստեղծելու ՈՒԳԸ աշխատանքներ կատարելու հնարավորություններ բոլոր այն ուսանողների համար, ովքեր ցանկություն ունեն և ընդունակ են զբաղվելու:

### **Բարեփոխումներ և կրթության որակի ապահովում**

Ֆակուլտետը լիովին ներգրավված է բուհի կողմից իրականացվող կրթական համակարգի բարեփոխումների և համալսարանական կրթական ծրագրերի կազմման գործընթացին:

ա)Յունեսկոյի դասակարգմամբ նոր ձևաչափով և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվել, մշակվել են բակալավրի և մագիստրատուրայի մասնագիտությունների բնութագրերը:

բ) Կրեդիտային համակարգի պահանջներին և չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններ են կազմվել առկա ուսուցման բակալավրի "Մաթեմատիկա", "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" և "Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա" մասնագիտությունների համար:

գ) Ամբիոնների կողմից վերամշակվել են թողարկվող մասնագիտությունների առարկաների ուսումնամեթոդական փաթեթները, ուսումնական պլանին համապատասխան փոփոխվել են առարկայական ուսումնական ծրագրերը, վերամշակվել դասախոսական տեքստերը:

դ) Նոր ուսումնական պլաններին համապատասխան վերամշակվում են մասնագիտությունների տեղեկագրքերը:

ե) Թողարկվող ամբիոնների կողմից կազմվել են մասնագիտությունների կրթական ծրագրերը: Թիմերը ներկայումս զբաղված են թերությունների վերացման և հիմքերի ապահովման գործընթացներով:

զ) Որակի ապահովման կենտրոնի, ինչպես նաև ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման խմբերի կողմից հարցումներ են անցկացվել ուսանողների, գործատուների շրջանում ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների, նրանց որակի ապահովման, գնահատման չափանիշների, գործիքների, մեխանիզմների բարելավման ուղիների, կրթական բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:

է) Ֆակուլտետի ամբիոնների վարիչները, լաբորանտները և դասախոսները մասնակցում են ինստիտուտի ՈԱԿ-ի սեմինարներին, խորհրդատվություններին, ինչպես նաև ինքնավերլուծության աշխատանքներին:

#### Կրթական

ծրագրերի վերամշակման մասնագիտական խմբերի մեջ ընդգրկված են դեկանատի, թողարկվող ամբիոնների և գործատուների ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսանողներ:

Ծրագրերում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան ներառնված են.

ա/ մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը;



բ/ մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները;

գ/ ծրագրերի կրթական վերջնարդյունքները և կոմպետենցիաները;

դ/առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը սահմանված կարգերի և ընթացակարգերի շրջանակներում;

ե/մասնագիտական կրթական ծրագրերի համադրելիությունը որակավորումների ազդային շրջանակի հետ:

Կրթության կրեդիտային համակարգի կարևոր գործառույթներից են ընթացիկ ստուգումները և ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային եղանակը:

## Մոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն

Ֆիզմաթ ֆակուլտետի լավագույն ուսանողները ստացել են համալսարանի սահմանած անվանական կրթաթոշակները: Ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Շ. Հախիճյանի անվան կրթաթոշակ 2015թ. ստացել են "Ինֆորմատիկա" մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի ուսանող Գոռ Մանուկյանը "Մաթեմատիկա" մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրի ուսանողուհի Արփինե Սաքանյանը:

Ֆիզմաթ ֆակուլտետի ուսանողները կազմակերպել և ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողական խորհրդի կողմից կազմակերպած հետևյալ միջոցառումներին՝

- Փետրվարի 14-ին Թեժ լեռան հովտում տեղի ունեցավ "Լոռվա Ձմեռ-2015" 45-րդ ավանդական մարզատոնահանդեսը:
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված այցելություն դեպի Ծիծեռնակաբերդ:



- Ապրիլի 17-ին Սուրբ Հովհաննես Իմաստասեր Կաթողիկ Օձնեցու ննջման օր:



- Մայիսի 19-ին Վանաձորի պետական համալսարանի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված 7 տուրից բաղկացած շախմատի մրցաշար նվիրված մայիսյան հաղթանակներին:



- Մայիսի 20-ին ՎՊՀ ուսանողական խորհրդի կողմից նախաձեռնած շաբաթօրյակ:
- Մայիսի 28-այցելություն Կոտրած եկեղեցի



- Մայիսի 31- էքսկուրսիա դեպի Թբիլիսի. մասնակցություն Վարդատունին, որը նվիրված էր հայ մեծանուն բանաստեղծ և աշուղ Մայաթ -Նովային:



- Հունիսի 25-ին Վանաձորի պետական համալսարանի ուսանողական խորհրդի կողմից պարգևատրվեցին մայիսյան հաղթանակներին նվիրված շախմատի և թենիսի մրցաշարերի մրցանակակիրները:



- Հուլիսի 2-ին մագիստրոսների դիպլոմների հանձնման արարողություն:



- Սեպտեմբերի 19-ին մաքրման և աղբահանության աշխատանքներ Մայմեիի ստորոտի Վանաձորյան կիրճում:
- Սեպտեմբերի 21-ին արշավ նվիրված անկախության օրվան:



- Սեպտեմբերի 27-ին ամփոփվեցին հրաձգության մրցույթի արդյունքները. Թիմային հաշվարկ. առաջին տեղ՝ Ֆիզմաթ ֆակուլտետ, Տղաներ. երկրորդ տեղ՝ Ստեփան Ղուկասյան, Մաթեմատիկա 1-ին կուրս, Աղջիկներ.
  1. Մարիաննա Եղշատյան, Ինֆորմատիկա 4-րդ կուրս – 43 միավոր
  2. Ադրինե Դավթյան, Ինֆորմատիկա 3-րդ կուրս – 39 միավոր



- Հոկտեմբերի 12-ին առաջին կուրսեցիների ստուգման գրքույկների հանձնման արարողություն:



Պատվոգրերի հանձնում սեպտեմբերի 21-ին մրցանակային տեղեր գրաված ուսանողներին:



- Հոկտեմբերի 13-ին նշեցինք Ֆիզմաթ ֆակուլտետի դեկանի ծննդյան օրը:



- Հոկտեմբերի 4-ին Գյուլագարակ գյուղում նշվեց Լոռու մարզի բերքի տոնը:
- Հոկտեմբերի 21-ին այցելություն հայտնի քանդակագործ, նկարիչ, երաժիշտ Բոգդան Հովհաննիսյանի արվեստանոց:
- Նոյեմբերի 3-ին այցելություն Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն:





- Նոյեմբերի 11-ին ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ եղանք Կարեն Դեմրճյանի անվան մարզահամերգային համալիրում մասնակցելով համերգային ծրագրի:



- Նոյեմբերի 17-ին ֆլեշմոբ նվիրված ուսանողի միջազգային օրվան:



- Նոյեմբերի 24-ին Ֆիզմատ ֆակուլտետը «Բարին արա» ծրագրի շրջանակներում եղավ արյան դոնոր:



- Նոյեմբերի 23-24-ին կայացավ «Ոսկե աշուն» ամենամյա փառատոնը, որտեղ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Սուսաննա Հովսեփյանը և «Ֆիզիկա» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Մայա Խաչիկյանը համապատասխանաբար «Ժողովրդական պար» և «Ձեռագործ աշխատանք» անվանակարգերում գրավեցին առաջին պատվավոր տեղերը:



- Դեկտեմբերի 8-ին Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողները ներկա գտնվեցին «Ինչու է բողոքում արագիլը...» ինտերակտիվ ներկայացման:



- Դեկտեմբերի 18-ին բաց դաս-սեմինար «Տվյալների կառուցվածքներ և հենքեր» առարկայից:

2016թ. ֆիզմաթ ֆակուլտետի գլխավոր խնդիրներից են լինելու կրթության որակի բարձրացումը , համալսարանական ծրագրի ներդրումը, դասախոսական կազմի երիտասարդացումը, երիտասարդ կադրերի գիտական մակարդակի բարձրացումը, ուսանողների ինքնուրույն աշխատանքների որակի բարելավումը և անցած տարիների թերացումների և բացթողումների վերացումը:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝

Հ.Ֆ. Գրիգորյան